Նախագիծ լրամշակված

Երկրորդ ընթերցում

Կ-1074[2]-16.05.2025-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հիմնադրամների մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենքի 1-ին հոդվածը լրացնել նոր 9-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9. Բարձրագույն ուսումնական հաստատության իրավական կարգավիճակի, ստեղծման, գործունեության, վերակազմակերպման, կառավարման մարմինների, դրանց ձևավորման և լիազորությունների, գույքի օգտագործման ու ֆինանսատնտեսական հարաբերությունների առանձնահատկությունները սահմանվում են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքով: Սույն օրենքի դրույթները տարածվում են բարձրագույն կրթության և գիտության համակարգի նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հիմնադրամների մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք)~~ 1-ին հոդվածը լրացնել նոր 9-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9. Բարձրագույն ուսումնական հաստատության իրավական կարգավիճակի, ստեղծման, գործունեության, վերակազմակերպման, կառավարման մարմինների, դրանց ձևավորման և լիազորությունների, գույքի օգտագործման ու ֆինանսատնտեսական հարաբերությունների առանձնահատկությունները սահմանվում են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքով: Սույն օրենքի դրույթները տարածվում են բարձրագույն կրթության և գիտության համակարգի նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/1 ՄԻՆՉԵՎ Կ-1074[24]-16.05.2025-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	3-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետ	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/0) նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «28) **ներառականություն**՝ կրթական միջավայրի, քաղաքականությունների և գործելակերպերի համակարգային և ակտիվ վերափոխում, որպեսզի ուսանողները, ակադեմիական և գիտական կազմը, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ունենան ձեռքբերումներ գրանցելու հավասար հնարավորություն՝ վերացնելով խոչընդոտները, ապահովել մատչելի	**Ընդունվել է մասամբ:** Շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «28) **ներառականություն**՝ կրթական միջավայրի, վարվեցողության կանոնների և գործելակերպերի համակարգ, որն ապահովում է ուսանողների, ակադեմիական և գիտական կազմի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ձեռքբերումներ գրանցելու և որոշումների կայացմանը մասնակցելու հավասար	**Ընդունվել է մասամբ**

			միջավայր, տրամադրելով խելամիտ հարմարեցումներ և խթանելով այնպիսի միջավայրի ձևավորումը, որտեղ գնահատվում է բազմազանությունը, հարգվում է մարդու արժանապատվությունը և մասնակցությունը որոշումների կայացմանը.»:	հնարավորությունը՝ անհրաժեշտ մատչելի պայմանների և խելամիտ հարմարեցումների, ինչպես նաև մարդակենտրոն և բազմազանությունը գնահատող միջավայրի ապահովման միջոցով.»: Կետը խմբագրվել է իրավական որոշակիության նպատակով:	
2.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	3-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետ	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/0) նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «29) **մատչելիություն՝** համաձայն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի.»:	**Չի ընդունվել:** «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի ձևակերպումն ընդհանրական է, սույն օրենքի համատեքստում նախընտրելի է պահպանել բերված ձևակերպումը:	**Չի ընդունվել**
3.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	4-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/0) նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի «հասանելիությունը» բառը փոխարինել «մատչելիությունը» բառով:	**Ընդունվել է:** Հաշվի առնելով, որ բարձրագույն կրթության ոլորտում մատչելիություն հասկացությունը կրում է ավելի ընդհանրական բնույթ:	**Ընդունվել է**

4.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	4-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետ	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/0) նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «11) բոլորի համար բարձրագույն կրթության մատչելիության և ներառականության ապահովումը՝ համընդհանուր դիզայնի սկզբունքներին համապատասխան.»:	**Ընդունվել է մասամբ:** Շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «11) բարձրագույն կրթության մատչելիության և ներառականության ապահովումը՝ համընդհանուր դիզայնի սկզբունքներին համապատասխան.»: Կետը խմբագրվել է ձևակերպման հստակեցման նպատակով:	**Ընդունվել է մասամբ**
5.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/0) նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «2) ապահովում է ֆիզիկական միջավայրի, տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց կրթության՝ մյուսների հետ հավասար հիմունքներով կազմակերպման համար.»:	**Ընդունվել է:** Փոփոխությունը պայմանավորված է համապատասխան կետի սահմանման հստակեցման նպատակով:	**Ընդունվել է**

6.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	6-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետ	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/0) նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «9) ներառականության ապահովման նպատակով մատուցում է աջակցության ծառայություններ, այդ թվում՝ մեթոդական, հոգեբանական, հավելյալ կրթական ծրագրերը, ինչպես նաև անհատական ուսուցման պլանի կազմում, որոնք ցուցաբերվում են ուսանողին և ակադեմիական կազմին.»:	**Ընդունվել է:** Փոփոխությունը պայմանավորված է համապատասխան կետի սահմանման հստակեցման նպատակով:	**Ընդունվել է**
7.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	14-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետ	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/0) նախագծի 14-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «3) ուսանողի փորձառության պատշաճ ապահովումը երաշխավորող ենթակառուցվածքների առկայությունը, ներառյալ ներառականության ապահովման համար ֆիզիկական միջավայրի, տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության	**Ընդունվել է:** Փոփոխությունը պայմանավորված է համապատասխան կետի սահմանման հստակեցման նպատակով:	**Ընդունվել է**

			ապահովումը (որի նկարագիրը սահմանվում է լիցենզավորման կարգում).»:		
8.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	22-րդ հոդվածի 2-րդ մաս	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/0) նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «17) պահանջելու և ստանալու խելամիտ հարմարեցումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:»:	**Ընդունվել է:** Համապատասխան լրացումը պայմանավորված է օրենսդրությամբ սահմանված կարգով ուսանողի իրավունքի պահանջը բավարարելու նպատակով:	**Ընդունվել է**
9.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	23-րդ հոդված	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/0) նախագծի 23-րդ հոդվածը լրացնել նոր մասով հետևյալ բովանդակությամբ. «23. Բուհը և գիտական կազմակերպությունը ներառականությունը և մատչելիությունն ապահովում են համապատասխան կառուցվածքային միավորում ստեղծելու, պատասխանատու աշխատողի նշանակման կամ այդ ծառայության իրականացումը համապատասխան փորձ ունեցող հասարակական կազմակերպության պատվիրակման միջոցով:»:	**Ընդունվել է:** Համապատասխան լրացումը պայմանավորված է կարգավորման բացի լրացման նպատակով:	**Ընդունվել է**

10.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	35-րդ հոդվածի 1-ին մաս	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/0) նախագծի 35-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր կետով հետևյալ բովանդակությամբ. «25) հաստատում է մատչելիության և ներառականության ապահովման կարգը, ներառյալ անհատական ուսուցման պլանի մշակման կանոնները, աջակցող ծառայությունների և ժեստերի լեզվով թարգմանության պահանջները և բողոքարկման կարգը.»:	**Չի ընդունվել:** Նշված պահանջների մի մասը ներառված են լինելու լիցենզավորման կարգում, անհատական ուսուցման պլանի կազմումը պետք է կարգավորվի բուհի կողմից, քանի որ ըստ կրթական ծրագրերի դրանք կարող են խիստ տարբեր լինել և ընդհանրական որևէ փաստաթղթի մշակումը անիրատեսական է:	**Չի ընդունվել**
11.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	35-րդ հոդվածի 1-ին մաս	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-011/0) նախագծի 35-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր կետով հետևյալ բովանդակությամբ. «26) սահմանում է բուհերի և գիտական կազմակերպությունների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի, տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության առանձնահատուկ պահանջները.»:	**Չի ընդունվել:** Համապատասխան պահանջները ներառվելու են լիցենզավորման պահանջներում:	**Չի ընդունվել**
12.	ՀՀ Ազգային ժողովի	41-րդ հոդվածի 4-րդ մաս	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի (Կ-1074-16.05.2025-ԳԿ-	**Ընդունվել է:** Համապատասխան լրացումը	**Ընդունվել է**

	պատգամավոր Զարուհի Բաթոյան		011/0) նախագծի 41-րդ հոդվածի 4-րդ մասը «առանձնահատուկ» բառից առաջ լրացնել «կրթության» բառով:	կատարվել է ձևակերպման հստակեցման նպատակով:	
13.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արսեն Թորոսյան	44-րդ հոդվածի 8-րդ մաս	Նախագծի 44-րդ հոդվածով նախատեսվող 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «8. Սույն օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ ռեկտորի պաշտոնում երկու անգամ անընդմեջ ընտրվելու սահմանափակումը տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ռեկտորի պաշտոնում ընտրված անձանց նկատմամբ»:	**Չի ընդունվել:** Նախագծի 44-րդ հոդվածով նախատեսված կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենքի ընդունումից հետո ստեղծվում է նոր իրավահարաբերությունների շրջանակ, որում ներկայումս գործող կառավարիչները մտնում են տարբեր մեկնարկային պայմաններով՝ մեկ ամբողջական շրջափուլից (5 տարի) մինչև 1 տարի: Հաշվի առնելով փոփոխությունների ծավալը՝ նպատակահարմար է հնարավորություն ընձեռել բոլորին սկսել նման մեկնարկային կետից՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ զուգահեռ	**Չի ընդունվել**

				իրականացվում է բուհերի խոշորացման և գիտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացը:	
14.	ՀՀ կառավարություն	1-ին գլխի «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ» բաժին	Նախագծի 1-ին գլխում «Ընդհանոր դրույթներ» բառերից հետո լրացնել «Հոդված 1. » վերնագիր. «Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան» բառերը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դրույթը, այն է՝ «Օրենսդրական ակտերում նորմերը շարադրվում են հերթական համար ունեցող հոդվածների տեսքով:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
15.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «2) **բարձրագույն ուսումնական հաստատություն (այսուհետ՝ բուհ)**՝ ոչ առևտրային կազմակերպություն, որի հիմնական նպատակներն են բարձրագույն կրթության ծրագրերի, գիտատեխնոլոգիական գործունեության կազմակերպումը և իրականացումը, մասնագիտական կադրերի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			պատրաստումը և վերապատրաստումը, ինչպես նաև կրթության, գիտության, տեխնոլոգիաների և մշակույթի ոլորտների զարգացմանը, հասարակության առաջընթացին ու նորարարական ներուժի ձևավորմանը նպաստելը:»: Նոր խմբագրությունը պայմանավորված է բուհի գործունեության հիմնական նպատակների ամբողջական արտացոլման անհրաժեշտությամբ:		
16.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը խմբագրել նոր շարադրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «4) հետազոտությունների և մշակումների ոլորտ՝ նոր գիտելիքի ստեղծմանը, ընդլայնմանը կամ դրա կիրառման նոր ուղղությունների հայտնաբերմանն ուղղված մտավոր ստեղծագործական, համակարգված գործունեության ոլորտ, որը բաժանվում է հետևյալ տեսակների.»: Համապատասխան կետի խմբագրման անհրաժեշտությունը պայմանավորված է «հետազոտությունների և մշակումների ոլորտի» հասկացության սահմանման հստակեցմամբ, որի արդյունքում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			տպավորություն չի ստեղծվի, որ հետազոտությունների և մշակումների ոլորտ հասկացությունն ավելի նեղ է, քան դրա մեջ ընդգրկված հիմնարար հետազոտություն հասկացությունը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վերջինս իր մեջ ներառում է նաև գիտելիքի ընդլայնմանն ուղղված գործունեությունը:		
17.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «գիտական» բառը փոխարինել «գիտատեխնոլոգիական» բառով: Միաժամանակ սույն փոփոխությամբ պայմանավորված Նախագծի ողջ տեքստում «գիտական գործունեություն» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «գիտատեխնոլոգիական գործունեություն» բառերով՝ հաշվի առնելով, որ նման ձևակերպումն ավելի ընդգրկուն է և այն կապահովի գիտական կազմակերպություններին՝ ակադեմիական գիտական գործունեությունից և բարձրագույն կրթության որակի ապահովումից բացի, իրականացնել նաև անվտանգային և տնտեսական հետազոտություններ և	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			մշակումներ (ՀԱՄ):		
18.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետում «դասընթացների» բառը փոխարինել «մոդուլների» բառով, քանի որ համապատասխան հասկացությունը կրթական ծրագրերի կառուցվածքի մեջ ավելի ճշգրիտ է արտացոլում ուսուցման բովանդակային բաղադրիչները:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
19.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը խմբագրել նոր շարադրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «18) **ակադեմիական մոդուլ՝** կրթական ծրագրի բաղադրիչ հանդիսացող ամբողջական անկախ ուսումնական միավոր, որն ունի հստակ սահմանված ուսումնական վերջնարդյունքներ, որոնց գնահատման հիման վրա ուսանողին շնորհվում է կրեդիտների որոշակի քանակ.»: Համապատասխան կետի խմբագրման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ նոր ձևակերպումը հնարավորություն է տալիս կրթական ծրագրերի կառուցվածքում հստակեցնել ուսուցման բաղադրիչների բովանդակությունը և նպատակները՝ ընդգծելով ուսումնական վերջնարդյունքների վրա հիմնված	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			մոտեցումը:		
20.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետում «կամ կրթական» բառերից առաջ լրացնել «, ակադեմիական մոդուլի» բառերը՝ համապատասխան կետի սահմանման հստակեցման նպատակով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
21.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետում «պետության, » բառից հետո լրացնել «բուհի,» բառը, իսկ «ֆինանսական» բառը փոխարինել «դրամական» բառով: Վերջինս պայմանավորված է նրանով, որ «կրթաթոշակ» հասկացությունը վերաբերում է սովորողներին անհատույց տրամադրվող դրամական աջակցությանը, մինչդեռ «ֆինանսներ» հասկացությունը շատ ավելի լայն է և բովանդակալից, իսկ «բուհի» լրացումն ապահովում է, որ սահմանումը ներառի կրթաթոշակ տրամադրելու իրավասություն ունեցող բոլոր սուբյեկտներին, այդ թվում՝ նաև բուհերին, որպես կրթաթոշակ տրամադրող կողմ: Ներկայիս սահմանման մեջ բացակայում է բուհի կողմից կրթաթոշակ տրամադրելու	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			հնարավորության ուղղակի արձանագրումը, ինչն անհրաժեշտ է իրավական հստակության և գործնական կիրառելիության նպատակով:		
22.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետից հետո լրացնել նոր 33-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «33) **ակադեմիական ազնվություն՝** ակադեմիական էթիկայի մաս կազմող կանոնների համախումբ, որոնք պետք է պահպանվեն ակադեմիական գործունեության ժամանակ՝ ներառյալ օրիգինալ աշխատանքի ստեղծումը, սկզբնաղբյուրներին ճշգրիտ հղումը, գրագողությունից, զեղծարարությունից, խարդախությունից և տվյալների ու փաստերի կեղծումից խուսափելը, ինչպես նաև ակադեմիական գործունեության ժամանակ աշխատանքի, առաջադրանքների պատրաստման, գնահատման և գիտական փորձաքննության ընթացքում թափանցիկության ու հիմնավորվածության ապահովումը.», որից հետո տվյալ կետին հաջորդող կետերի համարակալումն առաջարկում ենք համապատասխանեցնել հերթական	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			համարների հաջորդականությանը: Նոր կետի լրացումը պայմանավորված է Նախագծի 15-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետի սահմանմամբ՝ ակադեմիական ազնվության խախտումը հանգեցնում է պատասխանատվության միջոցի կիրառման, մինչդեռ, օրենսդրական ոչ մի ակտով սահմանված չէ, թե ինչ է իրենից ներկայացնում ակադեմիական ազնվությունը: Իրավական որոշակիության սկզբունքն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում Նախագծով սահմանել «ակադեմիական ազնվություն» հասկացությունը, որով պայմանավորված անհրաժեշտ է նաև խմբագրել Նախագծի 36-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը, այն է՝ **«19) հաստատում է ակադեմիական էթիկայի, ներառյալ ակադեմիական ազնվության և վարվեցողության սկզբունքները.»:**		
23.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մասի	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 43-րդ կետից (լրամշակված 44) հետո լրացնել նոր 45-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «45) **դասախոս**՝ բուհում կրթական գործունեություն իրականացնող	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			աշխատող, որը տեսական, գործնական, մասնագիտական գիտելիքներ է դասավանդում ուսանողներին կամ սովորողներին, նպաստում է դրանց յուրացմանը և ստուգմանը: Դասախոսը կարող է զբաղվել գիտատեխնոլոգիական գործունեությամբ.», որից հետո տվյալ կետին հաջորդող կետերի համարակալումն առաջարկում ենք համապատասխանեցնել հերթական համարների հաջորդականությանը: Նախագծում «դասախոս» հասկացության սահմանման ներառումը պայմանավորված է իրավական հստակություն ապահովելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև տարաբնույթ մեկնաբանություններից և կիրառման անորոշությունից խուսափելու համար:		
24.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի կետերի համարակալումը համապատասխանեցնել հերթական համարների հաջորդականությանը՝ պայմանավորված Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի կետերի հերթական համարների համապատասխանեցմամբ,	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			քանի որ 4-րդ հոդվածի 1-ին մասում 18-րդ կետին հաջորդում է 17-րդ կետը:		
25.	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 8-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 8-րդ մասի կետերի համարակալումը համապատասխանեցնել հերթական համարների հաջորդականությանը՝ պայմանավորված նույն մասի կետերի հերթական համարների համապատասխանեցմամբ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
26.	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 13-րդ մաս	Հաշվի առնելով, որ Նախագծի 6-րդ հոդվածի 5-րդ և նույն հոդվածի 13-րդ մասերի նորմերը բովանդակային առումով կրկնում են միևնույն կարգավորումը, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված դրույթը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները:»՝ առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածի 13-րդ մասը հանել, որից հետո 6-րդ հոդվածի մասերի համարակալումը համապատասխանեցնել հերթական համարներին:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

27.	ՀՀ կառավարություն	7-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարությանը» բառերը փոխարինել «Կառավարությանը» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
28.	ՀՀ կառավարություն	7-րդ հոդվածի 5-րդ մաս	Հաշվի առնելով, որ «ներկայացուցչական կառույցների» վերաբերյալ Նախագծով որևէ այլ կարգավորում չկա, միաժամանակ՝ Նախագծում առկա են կարգավորումներ «ուսանողական ներկայացուցչական մարմիններ» հասկացության վերաբերյալ, ինչպես նաև ինքնակառավարման մարմինները հստակեցնելու նպատակով՝ առաջարկվում է Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասի «ներկայացուցչական կառույցները» բառերը փոխարինել «ուսանողական ներկայացուցչական մարմինները»	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			բառերով:		
29.	ՀՀ կառավարություն	7-րդ հոդվածի 9-րդ մաս	Հաշվի առնելով, որ ժամկետների սահմանումը կարող է փոփոխությունների ենթարկվել, ուստի առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 9-րդ մասում «մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը» բառերը փոխարինել «օրենսդրությամբ սահմանված ժամկետներում» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
30.	ՀՀ կառավարություն	8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարությանը» բառերը փոխարինել «Կառավարությանը» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
31.	ՀՀ կառավարություն	8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը խմբագրել նոր շարադրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «2) գերատեսչական պատկանելության	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			գիտական (հետազոտական) կազմակերպություն՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն, որն իրականացնում է կիրառական հետազոտություններ, փորձարարական մշակումներ, ինչպես նաև նորարարական գործունեություն տվյալ գերատեսչության, ինչպես նաև այլ պետական գերատեսչությունների և մասնավոր հատվածի խնդիրների շրջանակներում՝ հիմնվելով կանոնադրության սահմանափակումների վրա.»: Նոր խմբագրման նպատակն է «գերատեսչական պատկանելիության գիտական (հետազոտական) կազմակերպություն» տեսակը չսահմանափակել տվյալ գերատեսչության խնդիրների շրջանակներով և ստեղծել հնարավորություն իրագործելու այլ պետական գերատեսչություններից և մասնավոր սեկտորից եկած պատվերներ՝ հավելյալ սահմանափակումներ նախատեսելով տվյալ կազմակերպության կանոնադրությամբ:		

32.	ՀՀ կառավարություն	8-րդ հոդվածի 4-րդ մաս	Հաշվի առնելով, որ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 7-րդ կետերով տրված «հետազոտական համալսարան» և «գիտական կազմակերպություն» հասկացությունները սահմանում են, որ ըստ հիմնադրի բուհերը և գիտական կազմակերպությունները կարող են լինել նաև մասնավոր, սակայն վերջիններիս հանար Նախագծով ավելի խորը կարգավորումներ նախատեսված չեն, ուստի առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասում «Հետազոտական համալսարանի» բառերից առաջ լրացնել «Հանրային» բառը՝ որպեսզի սահմանումը վերաբերի միայն հանրային հետազոտական համալսարանի կազմում գործող գիտական կազմակերպություններին:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
33.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան Հայաստանի Հանրապետության հիմնադրած ինքնակառավարվող հիմնադրամ է, ինչպես նաև 7-րդ կետում նշվում է, որ Ակադեմիայի նախագահության	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			անվանական կազմը հաստատվում է հիմնադիր մարմնի ղեկավարի կողմից: Որոշակիության սկզբունքի ապահովման նպատակով առաջարկում ենք համապատասխան հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «՝ իդեմս Կառավարության» բառերը:		
34.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդվածի 4-րդ մաս	Հաշվի առնելով, որ Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է Ակադեմիայի կազմը, որն իր կազմում միավորում է Ակադեմիայի անդամներին (ակադեմիկոսներին և ասոցացված անդամներին), Ակադեմիայի գիտական բաժանմունքները, Ակադեմիայի աշխատակազմը և հանրային գիտական կազմակերպությունների պատվավոր առաջատար և պատվավոր գլխավոր գիտաշխատողներին, ինչպես նաև Ակադեմիայի պատվավոր և արտասահմանյան անդամներին, ուստի Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասում առաջարկում ենք «ընտրվել» բառից հետո հանել «Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող» բառերը՝ վերը նշված	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			կարգավորումների համատեքստում **«Ակադեմիայի արտասահմանյան անդամ»** բառակապակցություն բովանդակության վերաբերյալ շփոթ չառաջացնելու նպատակով:		
35.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդվածի 7-րդ մաս	Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասը, որով սահմանվում է Ակադեմիայի նախագահության կազմը, վերջինիս ընտրության ընթացակարգը և այլ իրավական կարգավորումները, և գործող ու Նախագծով նախատեսվող կարգավորումների համեմատությունը՝ առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «7. Ակադեմիայի նախագահությունը բաղկացած է տասնմեկ անդամից, որի անվանական կազմը հաստատվում է հիմնադիր մարմնի ղեկավարի կողմից:»՝ նպատակ ունենալով ավելի հստակ սահմանել, թե որ սուբյեկտները կարող են հավակնել Ակադեմիայի նախագահության անդամ ընտրվելու,	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			Նախագծով նախատեսվող կարգավորումները «խոցելի» դիրքեր չզբաղեցնելու իրավական որոշակիության տեսանկյունով պայմանավորված:		
36.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդվածի 8-րդ մաս	Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասը, որով սահմանվում է Ակադեմիայի նախագահության կազմը, վերջինիս ընտրության ընթացակարգը և այլ իրավական կարգավորումները, և գործող ու Նախագծով նախատեսվող կարգավորումների համեմատությունը՝ առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «8. Նախագահության անդամներից երեքին առաջադրում է Կառավարությունը: Նախագահության մյուս անդամներն ընտրվում են Ակադեմիայի անդամներից՝ ընդհանուր ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Ակադեմիայի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			նախագահության անդամ:», նպատակ ունենալով ավելի հստակ սահմանել, թե որ սուբյեկտները կարող են հավակնել Ակադեմիայի նախագահության անդամ ընտրվելու, Նախագծով նախատեսվող կարգավորումները «խոցելի» դիրքեր չզբաղեցնելու իրավական որոշակիության տեսանկյունով պայմանավորված:		
37.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդվածի 11-րդ մաս 7-րդ կետ	Համապատասխան դրույթի հստակեցման նպատակով առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի 11-րդ մասի 7-րդ կետը խմբագրել նոր շարադրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «7) գիտական մշակույթի տարածումը, գիտաչափական և գիտական-գրադարանային արդի ծառայությունների մատուցումը, գիտատեխնոլոգիական գործունեության արդյունքի նկատմամբ վստահության ձևավորումը.»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
38.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդվածի 15-րդ մաս	Համապատասխան մասով առաջարկվող ձևակերպումը հստակեցնելու, ինչպես նաև ձևակերպման անորոշությունից խուսափելու նպատակով՝ առաջարկում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			ենք Նախագծի 9-րդ հոդվածի 15-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «15. Ակադեմիան իր կանոնադրական նպատակների իրականացման համար կարող է ֆինանսավորվել պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:»:		
39.	ՀՀ կառավարություն	10-րդ հոդվածի 10-րդ մաս	Օտարերկրյա ձևակերպման տարընկալումներից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածի 10-րդ մասում «Սփյուռքի, ինչպես նաև օտարերկրյա» բառերը փոխարինել «Օտարերկրյա» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
40.	ՀՀ կառավարություն	10-րդ հոդվածի 14-րդ մաս	Հաշվի առնելով, որ Նախագծում Բարձրագույն կրթության առաջին և երկրորդ մակարդակների համար արդեն իսկ սահմանված են ակադեմիական կրեդիտների համապատասխան ծանրաբեռնվածություն, ուստի առաջարկում ենք երրորդ մակարդակի համար ևս կատարել համապատասխան ամրագրում և Նախագծի 10-րդ հոդվածի 14-րդ մասի առաջին նախադասությունից հետո լրացնել նոր երկրորդ նախադասություն՝ հետևյալ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			բովանդակությամբ. «Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի համար ծանրաբեռնվածությունը կազմում է առնվազն 180 ակադեմիական կրեդիտ:»:		
41.	ՀՀ կառավարություն	11-րդ հոդվածի 10-րդ մաս	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:», ինչպես նաև Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասում «բարձրագույն կրթության և գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմին» հասկացության համար սահմանված կիրառության կրճատ տարբերակը՝ «(այսուհետ՝ Լիազոր մարմին)»՝ առաջարկում ենք Նախագծի 11-րդ հոդվածի 10-րդ մասում «լիազոր» բառը փոխարինել «Լիազոր» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
42.	ՀՀ կառավարություն	12-րդ հոդվածի 2-րդ մաս	Իրավական որոշակիության ապահովման նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «և ամփոփիչ ատեստավորմանը»	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

			բառերը փոխարինել «, ամփոփիչ ատեստավորմանը և կրթական գործընթացին» բառերով:		
43.	ՀՀ կառավարություն	12-րդ հոդվածի 3-րդ մաս	Համապատասխան դրույթի կարգավորման և հստակեցման նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մասը «մասնագիտություն:» բառից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է Կառավարության սահմանած կարգով, Լիազոր մարմնի կողմից՝ կենտրոնացված եղանակով, իսկ ամփոփիչ ատեստավորման արդյունքները հաշվի են առնվում տվյալ մասնագիտությամբ գործունեության լիցենզիա ստանալու համար:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
44.	ՀՀ կառավարություն	12-րդ հոդվածի 5-րդ մաս	Վրիպակի շտկմամբ պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ մասում «առողջապահության» բառը փոխարինել «առողջապահության» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
45.	ՀՀ կառավարություն	12-րդ հոդվածի 11-րդ մաս	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ «Եթե	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը:» և հաշվի առնելով իրավական հստակության ապահովման անհրաժեշտությունը՝ Նախագծի 12-րդ հոդվածի 11-րդ մասն առաջարկում ենք խմբագրել նոր շարադրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «11. Հիմնական բժշկական կամ ստոմատոլոգիական մասնագիտությամբ կամ նեղ բժշկական կամ ստոմատոլոգիական մասնագիտացման հենքի վրա ձեռք բերված լրացուցիչ մասնագիտացման արդյունքում բուժաշխատողը ձեռք է բերում հիմնական մասնագիտությանը կամ նեղ մասնագիտացմանը համապատասխան նոր ախտորոշիչ կամ բուժական գիտելիքներ կամ հմտություններ, որոնց հենքի վրա կարող է իրականացնել մասնագիտական գործունեություն՝ սահմանված շրջանակում:»:		
46.	ՀՀ կառավարություն	12-րդ հոդվածի 12-րդ մաս	Իրավական որոշակիության ապահովման նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածի 12-րդ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			մասից հանել «՝ առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի համաձայնեցմամբ» բառերը:		
47.	ՀՀ կառավարություն	13-րդ հոդվածի 7-րդ մաս	Իրավական հստակության ապահովման նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 13-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «դասընթացների ու» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
48.	ՀՀ կառավարություն	14-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ կետ	«Հիմնադրամների մասին» օրենքում և նույն իմաստով օգտագործվող «անձեռնմխելի կապիտալ» հասկացության հստակեցման նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 14-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ կետում «անձեռնմխելի» բառից հետո «դրամագլխի» բառը փոխարինել «կապիտալի» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
49.	ՀՀ կառավարություն	14-րդ հոդվածի 15-րդ մաս	Հաշվի առնելով, որ Նախագծի 14-րդ հոդվածի 15-րդ մասի և 15-րդ հոդվածի 3-րդ մասի միջև բովանդակային առումով կան կրկնություններ, ուստի առաջարկում ենք Նախագծի 14-րդ հոդվածի 15-րդ մասը հանել:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
50.	ՀՀ կառավարություն	15-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»՝ Նախագծի 15-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետում առաջարկում ենք ««Լիցենզավորման մասին»» բառերից հետո հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:		
51.	ՀՀ կառավարություն	15-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետ	Վրիպակի շտկմամբ պայմանավորված առաջարկում ենք Նախագծի 15-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետում «կետեով» բառը փոխարինել «կետերով» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
52.	ՀՀ կառավարություն	15-րդ հոդվածի 7-րդ մասի 10-րդ կետ	Իրավական հստակության ապահովման նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 15-րդ հոդվածի 7-րդ մասի 10-րդ կետում «նախազգուշացումը» բառը փոխարինել «նախազգուշացմամբ արձանագրված խախտումը» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
53.	ՀՀ կառավարություն	15-րդ հոդվածի 7-րդ մասի 12-րդ կետ	Իմաստային հստակությունն ապահովելու նպատակով՝ Նախագծի 15-րդ հոդվածի 7-րդ մասի 12-րդ կետում առաջարկում ենք «երեք տարի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			անընդմեջ» բառերից առաջ լրացնել «եթե» բառը:		
54.	ՀՀ կառավարություն	15-րդ հոդվածի 7-րդ մասի 14-րդ կետ	Իմաստային հստակությունն ապահովելու նպատակով՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 7-րդ մասի 14-րդ կետում առաջարկում ենք «առկա են» բառերից առաջ լրացնել «եթե» բառը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
55.	ՀՀ կառավարություն	16-րդ հոդվածի 6-րդ մաս	Լիցենզավորման կարգով կրթական ծրագրի (ԿԾ) իրականացման լեզվի սահմանման դրույթների հստակեցման նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 16-րդ հոդվածի 6-րդ մասի «համապատասխան:» բառից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Օտար լեզվով իրականացվող կրթական ծրագիրը լիցենզավորվում է որպես առանձին կրթական ծրագիր:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
56.	ՀՀ կառավարություն	16-րդ հոդվածի 17-րդ մասի 9-րդ կետ	Իրավական հստակության ապահովման նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 16-րդ հոդվածի 17-րդ մասի 9-րդ կետում «նախազգուշացումը» բառը փոխարինել «նախազգուշացմամբ արձանագրված խախտումը» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
57.	ՀՀ կառավարություն	16-րդ հոդվածի 19-րդ մաս	Իրավական հստակության ապահովման նպատակով՝ առաջարկում ենք	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			Նախագծի 16-րդ հոդվածի 19-րդ մասում «այդ թվում» բառերից հետո լրացնել «լիցենզիան կորցրած» բառերը:		
58.	ՀՀ կառավարություն	18-րդ հոդվածի 7-րդ մաս	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»՝ առաջարկում ենք Նախագծի 18-րդ հոդվածի 7-րդ մասում «լիազոր» բառը փոխարինել «Լիազոր» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
59.	ՀՀ կառավարություն	19-րդ հոդվածի 9-րդ մաս	Նախագծի 19-րդ հոդվածի 9-րդ մասում հղում է կատարվում 19-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում չանցնելու դեպքում բուհի գործունեությունը դադարեցվում է ժամկետների մասով՝ սակայն 19-րդ հոդվածի 3-րդ մասում ժամկետ սահմանված չէ, որով պայմանավորված առաջարկում ենք Նախագծի 19-րդ հոդվածի 9-րդ մասը հանել, որից հետո մասին հաջորդող մասերի համարակալումը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			համապատասխանեցնել հերթական համարներին:		
60.	ՀՀ կառավարություն	21-րդ հոդված	Նախագծի 21-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 24-րդ մասով. «24. Բարձրագույն կրթության և գիտության ոլորտները որակյալ երիտասարդ կադրերով ապահովելու նպատակով Կառավարությունը սահմանում է բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու կարգը: Նույն կարգով սահմանվում են նաև տարկետում ստանալու պայմանները, բուհերի և մասնագիտությունների ցանկը:»: Համապատասխան լրացումը կարգավորման հիմք է հանդիսանալու Կառավարության կողմից խթանելու երիտասարդների մասնագիտացմանը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			գիտության և տեխնոլոգիայի բնագավառներում. Ինչն իր հերթին ևս կնպաստի բարձրագույն կրթության հավասարակշռված զարգացմանը:		
61.	ՀՀ կառավարություն	21-րդ հոդվածի 9-րդ մաս	Նախագծի 21-րդ հոդվածի 9-րդ մասում «Առաջին շրջափուլով ընդունելությունը» բառերը փոխարինել «Ընդունելության գործընթացը» բառերով՝ համապատասխան մասի կիրառելիությունն ապահովելու նպատակով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
62.	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 2-րդ մաս 2-րդ կետ	Իրավական հստակության ապահովման նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «(ակադեմիական մոդուլները)» բառերը փոխարինել «կամ ակադեմիական մոդուլները» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
63.	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 2-րդ մաս 15-րդ կետ	Հաշվի առնելով, որ Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետին հաջորդում է 15-րդ կետը՝ առաջարկում ենք Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետին հաջորդող 15-րդ կետի համարակալումն համապատասխանեցնել հերթական համարին:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
64.	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 7-րդ մաս	Համապատասխան դրույթի հստակեցման նպատակով՝ առաջարկում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			ենք Նախագծի 22-րդ հոդվածի 7-րդ մասում «Բժշկական մասնագիտությունների դեպքում վերականգնվելիս անհրաժեշտ է վերահանձնել ամփոփված քննությունները» բառերը փոխարինել «Կարգավորվող մասնագիտությունների դեպքում՝ վերականգնվելիս կարող է կարգով սահմանվել նախկինում հանձնված քննությունների վերահանձնում, ինչպես նաև վերականգնվելու հնարավորության սահմանափակումներ» բառերով:		
65.	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 9-րդ մաս	Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասի խմբագրմամբ պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 22-րդ հոդվածի 9-րդ մասը տրոհել 2 մասի՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «9. Բուհում կարող են գործել ուսանողական ինքնակառավարման մարմիններ, որոնց ձևավորման կարգը հաստատում է բուհի հոգաբարձուների խորհուրդը: 10. Բուհում գործում է ուսանողական ներկայացուցչական մարմին, որը ձևավորվում է կանոնադրությամբ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			սահմանված կարգով՝ ընտրությունների միջոցով, ուսանողներից կամ ուսանողական ինքնակառավարման մարմիններից՝ որի գործունեության շրջանակը սահմանվում է սույն օրենքով ու բուհի կանոնադրությամբ:», որից հետո տվյալ մասին հաջորդող մասերի համարակալումը համապատասխանեցնել հերթական համարների հաջորդականությանը:		
66.	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 10-րդ մաս	Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասի խմբագրմամբ պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 22-րդ հոդվածի 10-րդ մասում (լրամշակված 11-րդ) «Ուսանողական» բառից հետո «ինքնակառավարման» բառը փոխարինել «ներկայացուցչական» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
67.	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետ	Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասի խմբագրմամբ պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 22-րդ հոդվածի 10-րդ մասի (լրամշակված 11-րդ մաս) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «2) ունենալ իր գործունեության հստակ ոլորտներ և չշեղվել ուսանողների	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			լավագույն շահերը ներկայացնելու իր առաքելությունից.»:		
68.	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 13-րդ մաս	Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասի խմբագրմամբ պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 22-րդ հոդվածի 13-րդ մասում (լրամշակված 14-րդ մաս) «10» թիվը փոխարինել «11» թվով, իսկ «ինքնակառավարման» բառը՝ «ներկայացուցչական» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
69.	ՀՀ կառավարություն	23-րդ հոդվածի 2-րդ մաս	Հաշվի առնելով, որ աշխատողները ոչ իրավաբանորեն, ոչ էլ ֆիզիկապես չեն կարող սահմանվել, ուստի առաջարկում ենք Նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մասում «աշխատողներ» բառը փոխարինել «հաստիքներ» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
70.	ՀՀ կառավարություն	23-րդ հոդվածի 14-րդ մաս	Իմաստային հստակություն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 23-րդ հոդվածի 14-րդ մասում «թվանիշային» բառը փոխարինել «թվային» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
71.	ՀՀ կառավարություն	23-րդ հոդվածի 18-րդ մաս	Նախագծի 23-րդ հոդվածի 18-րդ մասի 12-րդ կետից հետո լրացնել նոր 13-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «13) ըստ անհրաժեշտության ներգրավվել գիտելիքի տարածմանը և հանրային հաղորդակցմանը նպաստող միջոցառումներում.», որից հետո տվյալ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			կետին հաջորդող կետի համարակալումը համապատասխանեցնել հերթական համարին: Համապատասխան լրացման անհրաժեշտությունն այն է՝ Հոդվածի 19-րդ մասում նշված կետը սահմանված է որպես պարտականություն, այնինչ գործառնական տեսանկյունից այն առավել ճիշտ է ձևակերպել որպես իրավունք:		
72.	ՀՀ կառավարություն	23-րդ հոդվածի 18-րդ մասի 1-ին կետ	Համապատասխան կետով առաջարկվող ձևակերպումը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 23-րդ հոդվածի 18-րդ մասի 1-ին կետում «վերջնարդյունքներին» բառից առաջ լրացնել «բովանդակությանն ու» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
73.	ՀՀ կառավարություն	23-րդ հոդվածի 19-րդ մասի 7-րդ կետ	Հաշվի առնելով, որ նույն հոդվածի 18-րդ մասի 8-րդ կետում գիտական փորձաքննության ու խորհրդատվության իրականացումը սահմանված է որպես իրավունք, ուստի կրկնությունը բացառելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 23-րդ հոդվածի 19-րդ մասից հանել 7-րդ կետը և տվյալ կետին հաջորդող կետի համարակալումը համապատասխանեցնել հերթական	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			համարին:		
74.	ՀՀ կառավարություն	23-րդ հոդվածի 19-րդ մասի 10-րդ կետ	Համապատասխան կետով առաջարկվող ձևակերպումը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 23-րդ հոդվածի 19-րդ մասի 10-րդ կետը շարադրել նոր 9-րդ խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «9) իր (այդ թվում՝ համահեղինակած) հետազոտության արդյունքները հրապարակելիս առաջնորդվել ընթերցողների հնարավորինս լայն մասնագիտական շրջանակ ունեցող հեղինակավոր գիտական հարթակների ընտրության սկզբունքով.»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
75.	ՀՀ կառավարություն	23-րդ հոդվածի 19-րդ մասի 11-րդ կետ	Հաշվի առնելով, որ համապատասխան կետը, որպես իրավունք 18-րդ կետում լրացվել է, որպես նոր 13-րդ մաս, այն է՝ «13) ըստ անհրաժեշտության ներգրավվել գիտելիքի տարածմանը և հանրային հաղորդակցմանը նպաստող միջոցառումներում.», ուստի առաջարկում ենք Նախագծի 23-րդ հոդվածի 19-րդ մասից հանել 11-րդ կետը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
76.	ՀՀ	24-րդ հոդվածի 2-	Ելնելով Նախագծի ամբողջ տեքստում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

	կառավարություն	րդ մաս	հասկացությունների միասնական կիրառման տեսանկյունից՝ առաջարկում ենք Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասում «կազմ» բառից առաջ «Դասախոսական» բառը փոխարինել «Ակադեմիական» բառով:		
77.	ՀՀ կառավարություն	26-րդ հոդվածի 5-րդ մաս	Համապատասխան մասով առաջարկվող ձևակերպումը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 26-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «5. Բուհերում գործում է ընտրական անկախ մարմին, որը պատասխանատու է բուհում ընտրական գործընթացների կազմակերպման և դրանց ժողովրդավարական ու մասնակցային պատշաճ մակարդակով իրականացման համար, որի ձևավորման կարգը, աշխատակարգը ու լիազորությունների շրջանակը սահմանվում է բուհի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով, որոնք պետք է երաշխավորեն ընտրական մարմնի անկախ գործունեությունը:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
78.	ՀՀ կառավարություն	27-րդ հոդվածի 10-րդ մաս	Նախագծի 27-րդ հոդվածի 10-րդ մասում հղում է կատարվում Նախագծի 31-րդ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			հոդվածի 18-րդ մասի պահանջներին, սակայն Նախագծի 31-րդ հոդվածը 18-րդ մաս չունի, ուստի տեխնիկական վրիպակի շտկման անհրաժեշտությունից ելնելով առաջարկում ենք Նախագծի 27-րդ հոդվածի 10-րդ մասում «17-րդ և 18-րդ» բառերը փոխարինել «16-րդ և 17-րդ» բառերով:		
79.	ՀՀ կառավարություն	27-րդ հոդվածի 19-րդ մաս	Նախագծի 27-րդ հոդվածի 19-րդ մասը խմբագրել նոր շարադրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «19. Բուհի կառուցվածքում չգործող հանրային գիտական կազմակերպություն հիմնադրվում է միայն այն դեպքերում, եթե այն իրականացնելու է կիրառական բնույթի հետազոտություններ կամ փորձարարական մշակումներ գերազանցապես պետական որևէ գերատեսչության կամ մի քանի գերատեսչությունների, ինչպես նաև մասնավոր հատվածի խնդիրների շրջանակում: Ընդ որում, դրա հիմնադրման որոշման կայացման հիմքում պետք է դրվեն տվյալ բնույթի հետազոտությունները և մշակումները հետազոտական համալսարանների	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			գիտական կազմակերպություններում իրականացնելու անհնարինության հիմնավորումները, տվյալ գերատեսչությունների կամ մասնավոր հատվածի կողմից պատշաճ մակարդակի և պատշաճ ծանրաբեռնվածությամբ հետազոտական և մշակումների խնդիրներ առաջադրելու կարողունակության կամ պահանջարկի վերլուծությունը և դրանց մասին Լիազոր մարմնի կողմից ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի դրական եզրակացությունը:»: Առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է շահագրգիռ կողմերի՝ այլ գերատեսչություններին, ինչպես նաև մասնավոր հատվածին առնչվող կիրառական բնույթի հետազոտությունների կամ փորձարարական մշակումների շրջանակն ընդլայնելու նպատակով:		
80.	ՀՀ կառավարություն	28-րդ հոդված	Հաշվի առնելով, որ համապատասխան հոդվածում նկարագրվում է ոչ միայն հոգաբարձուների խորհրդի ձևավորումը, այլ նաև դրա իրավասության սահմանումը, ուստի առաջարկում ենք Նախագծի 28-րդ հոդվածի վերնագիրը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 28. Հանրային բուհի հոգաբարձուների խորհուրդը»:		
81.	ՀՀ կառավարություն	28-րդ հոդվածի 3-րդ մաս	Համապատասխան ձևակերպման տարընկալումներից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք նախագծի 28-րդ հոդվածի 3-րդ մասում «Սփյուռքից կամ այլ պետության» բառերը փոխարինել «օտարերկրյա» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
82.	ՀՀ կառավարություն	28-րդ հոդվածի 7-րդ մաս	Հաշվի առնելով, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:» և Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված «բարձրագույն կրթության և գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմին (այսուհետ՝ Լիազոր մարմին)» հասկացությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ համապատասխան գործընթացը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			նախատեսված է բուհի կանոնադրությամբ՝ առաջարկում ենք Նախագծի 28-րդ հոդվածի 7-րդ մասում «լիազոր» բառը փոխարինել «Լիազոր» բառով, իսկ «նշելով թե օրենքի» բառերից հետո լրացնել «կամ կանոնադրության,» բառերը:		
83.	ՀՀ կառավարություն	28-րդ հոդվածի 9-րդ մասի 11-րդ կետ	Հաշվի առնելով, որ ֆինանսական աուդիտ իրականացնող իրավաբանական անձի ընտրությունը կատարվում է մրցութային ընթացակարգով՝ ըստ «Գնումների մասին» օրենքի՝ անհրաժեշտություն է առաջանում որպեսզի հոգաբարձուների խորհուրդը հաստատի ոչ թե ընտրությունը, այլ հաստատի ֆինանսական աուդիտ իրականացնող իրավաբանական անձի ընտրության տեխնիկական բնութագիրը և ընտրության արդյունքները, ուստի առաջարկում ենք Նախագծի 28-րդ հոդվածի 9-րդ մասի 11-րդ կետում «ընտրության» բառից հետո լրացնել «տեխնիկական բնութագրի և ընտրության արդյունքների» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
84.	ՀՀ կառավարություն	29-րդ հոդվածի 3-րդ մաս	Համապատասխան մասով առաջարկվող ձևակերպումը հստակեցնելու	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 29-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «բոլոր» բառը:		
85.	ՀՀ կառավարություն	29-րդ հոդվածի 4-րդ մաս	Համապատասխան մասով առաջարկվող ձևակերպումը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 29-րդ հոդվածի 4-րդ մասը «պրոռեկտորները» բառից հետո լրացնել «և կանոնադրությամբ նախատեսված այլ ի պաշտոնե անդամներ» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
86.	ՀՀ կառավարություն	29-րդ հոդվածի 6-րդ մաս	Համապատասխան մասով առաջարկվող ձևակերպումը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 29-րդ հոդվածի 6-րդ մասում «գիտական խորհուրդների նախագահները» բառերը փոխարինել «ներկայացուցիչները» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
87.	ՀՀ կառավարություն	31-րդ հոդվածի 2-րդ մաս	Հաշվի առնելով Նախագծի 31-րդ հոդվածի 4-րդ մասը, այն է՝ «Հանրային բուհի ռեկտորն ընտրվում է միջազգային մրցույթի միջոցով՝ բուհի հոգաբարձուների խորհրդի կողմից, գաղտնի քվեարկությամբ, հինգ տարի ժամկետով և խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով»՝ առաջարկում ենք Նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ մասում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			«սահմանվում են» բառերից առաջ լրացնել «, ինչպես նաև ընտրության պայմանները» բառերը:		
88.	ՀՀ կառավարություն	31-րդ հոդվածի 15-րդ մաս	Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում գործածվող եզրույթը՝ Նախագծի 31-րդ հոդվածի 15-րդ մասում «խզվում» բառն առաջարկում ենք փոխարինել «լուծվում» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
89.	ՀՀ կառավարություն	31-րդ հոդվածի 17-րդ մասի 6-րդ կետ	Հաշվի առնելով, որ Նախագծի 31-րդ հոդվածի 17-րդ մասով են սահմանվում ռեկտորի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնելու բոլոր հիմքերը, այսինքն՝ 17-րդ մասի ցանկացած կետում նշված դեպքն արդեն իսկ հանդիսանում է ռեկտորի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնելու համար բավարար առանձին հիմք, ուստի առաջարկում ենք Նախագծի 31-րդ հոդվածի 17-րդ մասի 6-րդ կետում «17» թիվը փոխարինել «16» թվով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
90.	ՀՀ կառավարություն	34-րդ հոդվածի 5-րդ մաս	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»՝ առաջարկում ենք Նախագծի 34-րդ հոդվածի 5-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը փոխարինել «Կառավարության» բառով:		
91.	ՀՀ կառավարություն	35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ	Համապատասխան կետով առաջարկվող ձևակերպումը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «առանձնահատկությունները» բառը փոխարինել «կարգը» բառով, իսկ «հավաստագրերին ներկայացվող պահանջները» բառերից հետո լրացնել «և օրենքով նախատեսված այլ կարգավորումները» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
92.	ՀՀ կառավարություն	35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետ	Համապատասխան կետով առաջարկվող ձևակերպումը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի «ներգրավված» բառից հետո լրացնել «առնվազն աշխատաժամանակի նորմալ տևողությամբ և» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
93.	ՀՀ կառավարություն	35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ	Հաշվի առնելով, որ Նախագծի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

		կետ	հաստատվող կարգը ներառված է նույն մասի 14-րդ կետում՝ առաջարկում ենք Նախագծի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը հանել, որից հետո հաջորդող կետերի համարակալումները համապատասխանեցնել հերթական համարին:		
94.	ՀՀ կառավարություն	35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ	Համապատասխան կետով առաջարկվող ձևակերպումը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը (լրամշակված 20-րդ մաս) շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «20) հաստատում է երրորդ մակարդակում ուսումնառության կազմակերպման և գիտական աստիճանի շնորհման կարգը, ներառյալ՝ ընդունելության ընդհանրական պայմանները և ուսումնառության կազմակերպման ընդհանուր պահանջները, ինչպես նաև գիտական աստիճանի շնորհման չափանիշներն ու ընթացակարգը.»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
95.	ՀՀ կառավարություն	36-րդ հոդվածի 1-ին մաս	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			«Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:», ինչպես նաև Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասը՝ «բարձրագույն կրթության և գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմին» հասկացության համար սահմանվել է կիրառության կրճատ տարբերակ, այն է՝ «(այսուհետ՝ Լիազոր մարմին)», ուստի առաջարկում ենք Նախագծի 36-րդ հոդվածի 1-ին մասում «Լիազոր մարմին» բառերից առաջ հանել «Բարձրագույն կրթության և գիտության ոլորտում» բառերը:		
96.	ՀՀ կառավարություն	36-րդ հոդվածի 1-ին մաս 19-րդ կետ	Նախագծի 36-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետն առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «19) հաստատում է ակադեմիական էթիկայի, ներառյալ ակադեմիական ազնվության և վարվեցողության սկզբունքները.»՝ նպատակ ունենալով առանձնակի ընդգծելու ակադեմիական ազնվության կարևորությունը, որպես	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			ակադեմիական էթիկայի բաղկացուցիչ մաս, որը սահմանված է Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասով:		
97.	ՀՀ կառավարություն	38-րդ հոդվածի 5-րդ մաս	Նախագծի 38-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «5. Հանրային բուհերը և հանրային գիտական կազմակերպությունները հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթի առնվազն 10 տոկոսը ուղղում են անձեռնմխելի կապիտալի համալրմանը:»՝ հաշվի առնելով, որ Հարկային օրենսգրքով «զուտ շահույթ» հասկացությունն օգտագործվում է գլխավորապես տրանսֆերային գնագոյացման մեթոդների կիրառման ժամանակ և անձեռնմխելի կապիտալի համալրման գործընթացին վերաբերելի չէ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
98.	ՀՀ կառավարություն	41-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 41-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «1. Բուհերը կրթական ծառայություններ մատուցելու համար կարող են սահմանել ըստ կրթական ծրագրերի ուսման վարձը և որոշել դրանց չափը: Ծագումով հայ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			օտարերկրյա քաղաքացի հանդիսացող ուսանողների համար չի կարող սահմանվել ավելի բարձր ուսման վճար քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար:»: Նախագծի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորման տարընկալումից խուսափելու համար «Սփյուռքի ուսանող» հասկացությունը հստակեցվել է:		
99.	ՀՀ կառավարություն	41-րդ հոդվածի 7-րդ մաս	Նախագծի 41-րդ հոդվածի 7-րդ մասում «առաջին անգամ» բառերից հետո լրացնել «բարձրագույն կրթական ծրագրով» բառերը՝ նպատակ ունենալով խուսափել ընդհանրական կարգավորումներից:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
100.	ՀՀ կառավարություն	41-րդ հոդվածի 9-րդ մաս	Նախագծի 41-րդ հոդվածի 9-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «9. Պետական բյուջեից նպատակային ուսուցման համար կրթաթոշակ կարող են ստանալ Կառավարության կողմից առաջատար ճանաչված օտարերկրյա բուհերում Հայաստանի Հանրապետության համար առաջնահերթություն հանդիսացող մասնագիտություններով բարձրագույն կրթություն ստացող Հայաստանի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			Հանրապետության քաղաքացիները՝ Կառավարության սահմանված կարգով և պայմաններով:»՝ նպատակ ունենալով համապատասխանեցնել Նախագծում օգտագործվող հասկացությունների հետ, մասնավորապես, կրթաթոշակ հասկացության հետ, միաժամանակ լիազորող նորմ ամրագրել Կառավարության համար՝ սահմանելու նաև կրթաթոշակի տրամադրման պայմանները:		

101.	ՀՀ կառավարություն	41-րդ հոդվածի 13-րդ մաս	Նախագծի 41-րդ հոդվածի 13-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «13. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ սահմանված կարգով պայմանագիր կնքած քաղաքացիների ուսումնառությունը կազմակերպում է բուհը՝ պետության կողմից ուսումնառության կրթաթոշակների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ:»: Առաջարկությունը կրում է տեխնիկական բնույթ և բխում է Նախագծի համատեքստից, մասնավորապես կրթական ծառայություններ մատուցում են բուհերը, իսկ պետության կողմից փոխհատուցվում են այդ ծառայության վճարները:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
102.	ՀՀ կառավարություն	42-րդ հոդվածի 6-րդ մաս	Տեխնիկական վրիպակի շտկմամբ պայմանավորված առաջարկում ենք Նախագծի 42-րդ հոդվածի 2-րդ մասում «հողամասեր» բառը փոխարինել «հողամասերի» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
103.	ՀՀ կառավարություն	7-րդ գլխի վերանգիր	Նախագծի 7-րդ գլխի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			«ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ»՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի կարգավորումներից, այն է՝ նորմատիվ իրավական ակտն ունենում է եզրափակիչ մաս և անցումային դրույթներ:		
104.	ՀՀ կառավարություն	43-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի՝ նորմատիվ իրավական ակտերի կառուցվածքին վերաբերող դրույթները՝ անհրաժեշտություն է առաջանում վերանայել Նախագծում որպես եզրափակիչ մաս կամ անցումային դրույթ սահմանված կարգավորումները, միաժամանակ հստակեցնելով մի շարք ձևակերպումներ, ինչպես նաև հղումների համարակալումները: Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք Նախագծի 43-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 43. Եզրափակիչ մաս 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ այն կարգավորումների, որոնց համար սահմանված է ուժի մեջ մտնելու այլ ժամանակահատված: 2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» պարբերությունն ուժի մեջ է մտնում 2030 թվականի հուլիսի 1-ից: Մինչև 2029 թվականի հուլիսի 1-ը գործող մասնավոր բուհերը վերակազմակերպվում (վերակազմավորվում) են ոչ առևտրային կազմակերպությունների կամ հիմնում են ոչ առևտրային կազմակերպություններ և դիմում են բուհի և կրթական ծրագրերի լիցենզավորման: 3. Սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված ուսումնառության գործընթացների կազմակերպումը բուհերում ներդնել 2027 թվականի սեպտեմբերի 1-ից, մինչ այդ բուհ ընդունված ուսանողների ուսումնառության հետ կապված իրավահարաբերությունները շարունակվում են կարգավորվել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ		

			կետի և «Կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների հիման վրա ընդունված իրավական ակտերով: 4. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ուսումնառության գործընթացի կազմակերպումը ներդնել 2026 թվականից: Մինչև սույն մասի ուժի մեջ մտնելը՝ գիտության թեկնածուի և գիտության դոկտորի գիտական աստիճանների հայցման համար սահմանված կարգով ու ժամկետներում ասպիրանտուրա ընդունված կամ հայցորդ կամ դոկտորանտ ձևակերպված անձանց համար գիտական աստիճանի շնորհման գործընթացը շարունակվում է կարգավորվել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքի 16-րդ հոդվածի դրույթների հիման վրա ընդունված իրավական ակտերով: Սույն մասի ուժի մեջ մտնելու պահից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ		

			մասի իմաստով գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար թեմաների հաստատումը դադարեցվում է: 5. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասն ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից: 6. Սույն օրենքի 15-րդ հոդվածով սահմանված Մասնագիտացված կառույցը ստեղծվում է մինչև 2027 թվականի հունվարի 1-ը: 7. Սույն օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջները հրապարակվում են 2027 թվականի հունվար ամսվա առաջին տասնօրյակում, իսկ նույն մասով նախատեսվող ընդունելությունը կազմակերպվում է 2029-2030 ուսումնական տարվանից: Մինչև սույն մասն ուժի մեջ մտնելը բուհ ընդունելության հետ կապված իրավահարաբերությունները շարունակվում են կարգավորվել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի և 21-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի և		

			«Կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների հիման վրա ընդունված իրավական ակտերով: 8. Սույն օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից: 9. Սույն օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2029-2030 ուսումնական տարվանից, նշված ժամանակահատվածից շուտ մասերը կիրարկվում են Կառավարության որոշմամբ խոշորացված հանրային բուհերի դեպքում: 10. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից: 11. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքը, բացառությամբ նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ և 4.1-4.3 մասերի, 8-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետի, 14-րդ հոդվածի, 21-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի և 2-րդ մասի 10-րդ կետի դրույթների, որոնք շարունակում		

			են գործել մինչև 2027 թվականի հունվարի 1-ը: 12. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքը: 13. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-135-Ն օրենքը: 14. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» 2015 թվականի ապրիլի 7-ի ՀՕ-23-Ն օրենքը: 15. Կրոնական բարձրագույն ուսումնական հաստատությունների դեպքում չեն գործում սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով սահմանվող բարձրագույն կրթության և գիտության ոլորտների աշխարհիկ բնույթին վերաբերող սկզբունքը ինչպես նաև 14-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված սահմանափակումը:		

			Կրոնական բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից առաջարկվող կրթական ծրագրերը պետք է ուղղված լինեն հոգևորական ծառայության կադրեր պատրաստելուն: 16. Հայաստանի Հանրապետությունում բուհերի միջազգային վարկանիշավորման աղյուսակներում առաջին հիսունյակում գտնվող բուհերի մասնաճյուղեր հիմնադրելիս կառավարության կողմից կարող են սահմանվել դրանց գործունեության համար սույն Օրենքով սահմանված կազմակերպական-իրավական ձևին վերաբերող ինչպես նաև 14-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, և 12-րդ մասով նախատեսված պայմաններից կամ սահմանափակումներից տարբերվող պայմաններ կամ սահմանափակումներ:»:		
105.	ՀՀ կառավարություն	44-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի՝ նորմատիվ իրավական ակտերի կառուցվածքին վերաբերող դրույթները՝ անհրաժեշտություն է առաջանում վերանայել Նախագծում որպես եզրափակիչ մաս կամ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			անցումային դրույթ սահմանված կարգավորումները, միաժամանակ հստակեցնելով մի շարք ձևակերպումներ, ինչպես նաև հղումների համարակալումները: «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի 44-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 44. Անցումային դրույթներ 1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո բոլոր լիցենզավորված կրթական ծրագրեր իրականացնող բուհերը պարտավոր են սույն օրենքով սահմանված կարգով՝ օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածի դրույթներին համապատասխան մինչև 2028 թվականը դիմել բուհի և ծրագրային լիցենզավորման, որից հետո համարվում են առաջին անգամ լիցենզավորված, և ենթակա են հավատարմագրման՝ 19-րդ հոդվածով սահմանված ժամանակահատվածում և պայմաններով: 2. Մինչև Կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն		

			որոշման ընդունումը շնորհված հավատարմագրման վկայականները վավեր են մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը: 3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիցենզիա ունեցող կրթական ծրագրերը, բացառությամբ Կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ սահմանված կարգով ծրագրային հավատարմագրում չանցած բժշկական մասնագիտություններով որակավորում շնորհող ծրագրերի, օրենքի ուժի մեջ մտնելուց հետո համարվում են նախահավատարմագրված, և դրանց շրջանավարտներին շնորհված որակավորումները ճանաչվում են պետության կողմից: 4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից, այդ դրությամբ գիտությունների թեկնածուի և գիտությունների դոկտորի գիտական աստիճանները հավասարեցվում են սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան շնորհված դոկտորի գիտական աստիճանին: 5. Սույն օրենքի 27-րդ հոդվածի		

			դրույթներին համապատասխան գիտական կազմակերպությունների հոգաբարձուների խորհուրդները ձևավորվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ութ ամսվա ընթացքում: 6. Մինչ սույն օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված պայմանների ուժի մեջ մտնելը՝ 1) Հանրային բուհի հոգաբարձուների խորհուրդը ձևավորվում է բուհի ակադեմիական կազմից, ուսանողության ներկայացուցիչներից, ինչպես նաև հիմնադրի և Լիազոր մարմնի ներկայացուցիչներից, 2) Հանրային բուհի հոգաբարձուների խորհրդի անդամներից հինգին առաջադրում է Լիազոր մարմինը իսկ հինգին՝ հիմնադիրը, 3) Հանրային բուհի հոգաբարձուների խորհրդի անդամներից տասին՝ բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով ներկայացնում է բուհը՝ հինգին՝ ակադեմիական կազմի ներկայացուցիչներից ներառյալ բուհի կառուցվածքում գործող գիտական կազմակերպություններից, հնարավորինս ապահովելով բուհի		

			տարբեր ակադեմիական միավորների ներկայացվածությունը, և հինգին՝ ուսանողական ներկայացուցչական մարմնի ներկայացուցիչներից: 7.Սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասը պարտադիր չէ սույն հոդվածի 6-րդ մասի հիմքով ձևավորվող հոգաբարձուների խորհրդի հիմնադրի և Լիազոր մարմնի ներկայացուցիչների համար: 8. Սույն օրենքի 9-րդ հոդվածում հանրային գիտական կազմակերպությունների պատվավոր առաջատար և պատվավոր գլխավոր գիտաշխատողներին վերաբերող դրույթները սկսում են գործել 2027 թվականից: Մինչ այդ, սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում հաստատվում է Ակադեմիայի կանոնադրությունը, և սահմանված ժամկետներում կազմակերպվում է Ակադեմիայի նոր անդամների ընտրությունը և ձևավորվում Ակադեմիայի հոգաբարձուների խորհուրդը՝ նախագահությունը, որի Ակադեմիայի կազմի անդամներն առաջադրվում են Ակադեմիայի կողմից՝		

			սույն օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին բավարարող անձանցից: Ակադեմիայի նախագահությունը կազմակերպում է Ակադեմիայի նախագահի ընտրությունը, նախագահի ներկայացմամբ հաստատում Ակադեմիայի կառուցվածքն ու ղեկավար կազմը՝ սույն օրենքով Ակադեմիային վերապահված գործառույթները կազմակերպելու և իրականացնելու նպատակով: 9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի կազմակերպություններն անցնում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գերատեսչական պատկանելության, որոնց վրա չի տարածվում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 27-րդ հոդվածի 19-րդ մասի կարգավորումները՝ մինչև Կառավարության որոշմամբ և սույն օրենքի կարգավորումներով համապատասխան խոշորացված հանրային հետազոտական		

			համալսարանների կազմում ներառվելը կամ սույն օրենքով սահմանված գիտական կազմակերպությունների տեսակներին համապատասխանեցվելը: 10. Սույն օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված երկու անգամ անընդմեջ ընտրվելու սահմանափակումը գործում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, մինչ այդ ռեկտոր հանդիսանալու հանգամանքը չի դիտարկում: 11. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո բոլոր լիցենզավորված կրթական ծրագրերը և լիցենզավորված կրթական ծրագրեր իրականացնող բուհերը համարվում են նախահավատարմագրված և պարտավոր են սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում անցնել ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում: 12. Խոշորացված Հետազոտական համալսարանների ձևավորման ժամանակ բուհին կամ գիտական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ բուհի կամ գիտական կազմակերպության		

			վերակազմավորման արդյունքում անցնում է հանրային բուհի կամ հանրային գիտական կազմակերպության տնօրինմանը համապատասխանաբար: 13. Ակադեմիական քաղաքի տարածքից դուրս արգելվում է բուհական նոր ենթակառուցվածքների ստեղծումը, եթե դա պայմանավորված չէ ենթակառուցվածքի բաղադրիչի կոնկրետ բնակլիմայական կամ աշխարհագրական առանձնահատկությունների հետ: Մինչ օրենքի ուժի մեջ մտնելը լիցենզիա ունեցող բուհերը իրենց գործունեությունը կարող են շարունակել իրենց տրված լիցենզիայում նշված գործունեության վայրում: Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կրթական ենթակառուցվածքների ընդլայնում հնարավոր է միայն Կառավարության կողմից հաստատված ակադեմիական քաղաքի հայեցակարգի հետ համապատասխանության պարագայում, որի վերաբերյալ եզրակացությունը տալիս է Լիազոր մարմինը՝ Ակադեմիական քաղաք հիմնադրամի կարծիքի հիման վրա:		

			14. Ակադեմիական քաղաք տեղափոխված հանրային բուհերին և գիտական կազմակերպություններին անհատույց տրամադրված անշարժ գույքը սեփականության իրավունքով տրամադրվում է ակադեմիական քաղաք հիմնադրամին, որը իրականացնում է այդ գույքի շահագործումը՝ գույքի շահագործման ռազմավարության շրջանակներում, որը մշակվում է միջազգային հեղինակավոր խորհրդատվական ընկերությունների կողմից և հաստատվում է Կառավարության կողմից: Ենթակառուցվածքների շահագործումից առաջացող ողջ եկամուտն ուղղվում է ակադեմիական քաղաք ծրագրի իրականացմանը, կամ ակադեմիական քաղաք հիմնադրամի անձեռնմխելի կապիտալի համալրմանը: 15. Բուհերում ընտրական անկախ մարմնի ձևավորումից հետո՝ երեք ամսվա ընթացքում, կազմակերպվում են նոր ուսանողական ներկայացուցչական մարմնի և ակադեմիական խորհրդի ընտրություններ: Գործող ուսանողական խորհուրդների և գիտական		

			խորհուրդների գործունեությունը դադարում է համապատասխան ընտրությունների ավարտից հետո տասներորդ օրը:»:		
«Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի					
106.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	Նախագծերի փաթեթով ներկայացվող տեքստերում հասկացությունների միասնական կիրառման տեսանկյունից ելնելով՝ առաջարկում ենք «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով՝ «5) 24-րդ կետում նշված «հետբուհական ուսուցում» բառերը փոխարինել «հետավարտական լրացուցիչ ուսումնառություն:» բառերով:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
107.	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը, այն է՝ «հղումները կատարվում են հստակ և ուղղակի»՝ առաջարկում ենք «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետի «ա»	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			ենթակետում նշված «բարձրագույն» բառը փոխարինել «Բարձրագույն» բառով, ինչպես նաև «առաջին» բառը փոխարինել «երկրորդ» բառով:		
108.	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը, այն է՝ «հղումները կատարվում են հստակ և ուղղակի»՝ առաջարկում ենք «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետում նշված «երկրորդ» բառը փոխարինել «երրորդ» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
109.	ՀՀ կառավարություն	8-րդ հոդվածի 1-ին կետ	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:» առաջարկում ենք «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետում նշված	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			«բարձրագույն» բառը փոխարինել «Բարձրագույն» բառով:		
«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի					
110.	ՀՀ կառավարություն	նախագծի վերնագիր	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին պահանջը՝ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
111.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	Վրիպակի շտկմամբ պայմանավորված և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «2-րդ» թիվը փոխարինել «3-րդ» թվով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
112.	ՀՀ կառավարություն	5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			«Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»: «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված «Մասնագիտական» բառերը փոխարինել «մասնագիտական» բառով:		
«Հիմնադրամների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի					
113.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Հիմնադրամների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում «Հիմնադրամների մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում, ուստի առաջարկում ենք «Հիմնադրամների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի					
114.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Գնումների մասին» օրենքում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում «Գնումների մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված դրույթը՝ առաջարկում ենք «Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը, իսկ «55.1» թիվը փոխարինել «55.1.» թվով:		
115.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված դրույթը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»՝ առաջարկում ենք «Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրը հանել:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի					
116.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծում «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում, ուստի առաջարկում ենք «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը:		
«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի					
117.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Հաշվի առնելով, որ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասում օրենքի անվանման հիշատակման մեջ նշված է նաև «Հայաստանի Հանրապետության» բառերը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթի պահանջները՝ առաջարկում ենք «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում ««Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» բառերը փոխարինել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» բառերով» բառերը փոխարինել ««Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության» բառերը փոխարինել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» բառերով» բառերով:		
«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի					
118.	ՀՀ կառավարություն	վերնագիր	Հաշվի առնելով, որ Նախագծով միայն փոփոխություններ են կատարվում, ուստի առաջարկում ենք «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրից հանել «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
119.	ՀՀ կառավարություն	6-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջների կատարումը՝ առաջարկում ենք «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 1-ին կետի վերջում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:		
«Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի					
120.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթը՝ առաջարկում ենք «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի					
121.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 2-րդ կետ	Հաշվի առնելով, որ փոփոխության նպատակն է հանդիսանում «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում կիրառված ձևի պահպանումը, ուստի առաջարկում ենք «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետում «(ասպիրանտներին,)» բառը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			փոխարինել «ասպիրանտներին,» բառով, ինչն էլ կապահովի հղման հստակությունը:		
«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի					
122.	ՀՀ կառավարություն	14-րդ հոդվածը	Առաջարկվող փոփոխությունը նախատեսում է՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդվածը տրոհել երկու հոդվածի՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Հոդված 15. Անցումային դրույթներ Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 4-րդ հոդվածի 2-րդ մասը, 5-րդ հոդվածը, 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 2-րդ մասի 1-ին կետը, 11-րդ հոդվածի 1-ին մասը, 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը և 14-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում 2026	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			թվականի սեպտեմբերի 1-ից:», որն էլ կնախատեսի նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ընդհանուր ժամկետ՝ «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը», ապա «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի կանոնին համապատասխան որպես անցումային դրույթ իր հերթին կնախատեսի առանձին հոդվածների ուժի մեջ մտնելու հիմնականից տարբերվող ժամկետներ:		
«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի					
123.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	Հաշվի առնելով, որ առաջարկությունը բխում է Նախագծերի փաթեթով ներկայացվող տեքստերում հասկացությունների միասնական կիրառման տեսանկյունից, ուստի առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում ««օրդինատուրայում» բառը փոխարինել «ռեզիդենտուրայում» բառով» բառերը փոխարինել ««մագիստրատուրայում, ասպիրանտուրայում և	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			օրդինատուրայում» բառերը փոխարինել «բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ մակարդակներում և ռեզիդենտուրայում»» բառերով:		
124.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Հաշվի առնելով, որ առաջարկությունը բխում է Նախագծերի փաթեթով ներկայացվող տեքստերում հասկացությունների միասնական կիրառման տեսանկյունից, ուստի առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածում ««օրդինատուրայում» բառը փոխարինել «ռեզիդենտուրայում» բառով» բառերը փոխարինել ««մագիստրատուրայում, ասպիրանտուրայում և օրդինատուրայում» բառերը փոխարինել «բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ մակարդակներում և ռեզիդենտուրայում»» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
«Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի					
125.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Հաշվի առնելով, որ Նախագծի 3-րդ հոդվածում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը բխում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքից, ուստի հստակեցման նպատակով առաջարկում ենք՝ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածում «ենթաօրենսդրական» բառը փոխարինել «դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական» բառերով:		
«Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի					
126.	ՀՀ կառավարություն	վերնագիր	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին պահանջը՝ առաջարկում ենք «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառերը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
127.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Հաշվի առնելով, որ Նախագծի 3-րդ հոդվածում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը բխում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքից, ուստի հստակեցման նպատակով առաջարկում ենք՝ «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածում «ենթաօրենսդրական» բառը փոխարինել «դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական» բառերով:		
«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծի					
128.	ՀՀ կառավարություն	վերնագիր	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին պահանջը՝ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծի վերնագրից հանել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ» բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					

129.	ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյան	9-րդ հոդվածի 4-րդ մաս	Ակադեմիայի ասոցիացված անդամ և ակադեմիկոս կարող են ընտրվել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն գիտնականները, որոնք առնվազն համապատասխանում են գիտական և ճարտարագիտատեխնիկական կադրերի ատեստավորման կարգով համապատասխանաբար առաջատար և գլխավոր գիտաշխատողի տարակարգի համար սահմանված պահանջներին: Հավելյալ պահանջներ սահմանվում են մրցույթի կազմակերպման կարգով, որը Ակադեմիայի ներկայացմամբ հաստատում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում Լիազոր մարմինը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**
130.	ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյան	9-րդ հոդվածի 8-րդ մաս	Առաջարկվում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «8. Ակադեմիայի նախագահությունը գլխավորում է Հայաստանի Հանրապետության նախագահը: Նախագահության անդամներից երկուսին առաջադրում է Կառավարությունը: Նախագահության մյուս անդամներն ընտրվում են Ակադեմիայի անդամներից՝ ընդհանուր		

			ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Ակադեմիայի նախագահության անդամ:»:		
131.	ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյան	10-րդ հոդվածի 7-րդ մաս	Առաջարկվում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «7. Բուհերում կրթական ծրագրերի դասավանդման լեզուն գրական հայերենն է: Բուհի սահմանած կարգով կրթական ծրագիրը, դրա ակադեմիական մոդուլները, առանձին դասընթացները, դասընթացների առանձին թեմաները կամ հետազոտական աշխատանքը կարող են դասավանդվել կամ իրականացվել օտար լեզվով այն պայմանով, որ տվյալ բուհում առկա են կրթական ծրագիրը տվյալ լեզվով դասավանդելու կարողություն ունեցող մասնագետներ եւ տվյալ լեզվով կրթական անհրաժեշտ ռեսուրսներ: Բուհը պետք է ապահովի, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող շրջանավարտներն իրենց	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

			մասնագիտության շրջանակներում տիրապետեն գրական հայերենին՝ ապահովելով կրթական ծրագրերի դասավանդումը գրական հայերենով կամ երաշխավորելով մասնագիտությանը համապատասխանող պատշաճ մակարդակով մասնագիտական հայերենի ուսուցում, որի առկայությունը հավաստվում է ծրագրային հավատարմագրման միջոցով: Մասնագիտական հայերենի իմացության մակարդակը հավաստվում է գիտելիքի պարտադիր ստուգմամբ և գնահատմամբ:»:		
132.	ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ	9-րդ հոդվածի 17-րդ մաս	Առաջարկվում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 17-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «՝ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի կրկնակի չափով՝ ասոցիացված անդամների համար և եռակի չափով՝ ակադեմիկոսների համար:»	**Ընդունվել է:**	**Ընդունվել է**

	Գաբրիելյան				